ՆԱԽԱԳԻԾ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

Օտար լեզուների և գրականության
ամբիոնի

Ամբիոնի վարիչ __________ Թադևոսյան Թ.Կ.

Արձանագրություն №____9____

«__123__»05_____2025 թ.

# ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ 011401. 00. 6. Օտար լեզու և գրականություն

Կրթական ծրագիր՝ 011401. 21. 6. Ռուսաց լեզու և գրականություն

Որակավորման աստիճան՝ Մանկավարժության բակալավր

Ամբիոն՝ Օտար լեզուների և գրականության

Ուսուցման ձևը՝ հեռակա

Կուրս/կիսամյակ 2 կուրս, 2 կիսամյակ

Դասախոս՝ Սահակյան Հեղինե

Էլ.հասցե/ներ sahakyanheghine@mail.ru

Վանաձոր- 2025թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | | |
|---|---|---|
| 1. | Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում | 3 |
| 2. | Դասընթացի նպատակը և խնդիրները | 3 |
| 3. | Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները | 3 |
| 4. | Դասընթացի կրթական վերջնարդյունքները | 4 |
| 5. | Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների | 5 |
| 6. | Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը | 5 |
| 7. | Ուսումնական աշխատանքները տեսակները | 6 |
| 8. | Դասավանդման մեթոդներ | 7 |
| 9. | Ուսումնառության մեթոդները | 7 |
| 10. | Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը | 8 |
| 11. | Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ | 10 |
| 12. | Դասընթացի ուսումնամեթոդական քարտ | 12 |
| 12.1. | Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ | |
| 12.2. | Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ | 12 |
| 12.3. | Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ | |
| 12.4. | Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ | 16 |
| 13. | Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում | 17 |
| 14. | Գնահատում | 18 |
| 14.1. | Ուսանողների գիտելիքների ստուգում | 19 |
| 14.2. | Հարցաշար | 19 |
| 14.3. | Գնահատման չափանիշներ | 19 |
| 15. | Դասընթացի համառոտ նկարագրիչ | 22 |

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

*1.* Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում[1].

«ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 2» դասընթացը վերաբերում է առարկաների հումանիտար ցիկլի հիմնական մասին: Ներառված է 011401.21.6 կրթական ծրագրի ուսումնական պլանի Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ կրթամասում:

Դասընթացի նպատակը և խնդիրները.

1.1. Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին ամբողջական և հիմնավորված գիտելիք տրամադրել արտասահմանյան գրականության կարևորագույն ստեղծագործությունների և պատմամշակութային ժամանակաշրջանների մասին:

Դասընթացի խնդիրներն են.

- «ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-ը որպես առարկա միտված է ուսանողների կրթվածության ընդհանուր մակարդակի բարձրացմանը, որոշակի արժեքային համակարգի ձևավորմանը, վերլուծական հմտությունների զարգացմանը;
- ապահովել մասնագիտական հաղորդակցության ոլորտում ուսանողների խոսքային գործունեությունը;
- ապահովել ուսանողների խոսքային գործունեությունը կրթական, մասնագիտական և մշակութային հաղորդակցության ոլորտում;
- Հարստացնել ուսանողների մտահորիզոնը, պատկերացում տալ աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների մասին գրական երկերի միջոցով:

2. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները

«ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 2» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է՝ ռուսերեն լեզվով գեղարվեստական տեքստերի կարդալու, հասկանալու, վերարտադրելու գիտելիքների, անգլերեն լեզվով հաղորդակցվելու, սահուն խոսքը ընկալելու հմտությունների առկայությունը, որոնք ձեռք են բերվել «Արտասահմանյան գրականության ներածություն», «Ռուս գրականության պատմություն» դասընթացների միջոցով ուսումնառության երկու տարիների ընթացքում:

3. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[2] և /կամ կոմպետենցիաները.

«ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 2» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

Դասընթացը ուսումնասիրելու արդյունքում ուսանողը պետք է իմանա՝

- ներկայացնել արտասահմանյան գրականության պատմությունը
- բացատրել արտասահմանյան գրականության զարգացման հիմնական միտումները

---

[1] Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

[2] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf
Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

- բացատրել Անտիկ Ժամանաշրջանի, Միջնադարի, Վերածննդի, Լուսավորչության, գրական ուղղությունների և ժամանակաշրջանների առանձնահատկությունները՝ գրականության համատեքստում
- թվարկել ուսումնասիրվող ժամանակահատվածների կարևորագույն ներկայացուցիչներին և գրական ստեղծագործությունները
- ներկայացնել ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման կարևորությունը դասընթացի շրջանակում

Դասընթացը ուսումնասիրելու արդյունքում ուսանողը պետք է կարողանա
- վերլուծել գրական ստեղծագործությունները միջմշակության առնչությունների ներքո
- բանավիճել
- կիրառել ձեռք բերված գիտելիքները մասնագիտական գործունեության ժամանակ
- մեկնաբանել գրականության գեղագիտական արժեքը և այլ հասարակական հարաբերություններում դրանից ներբերած գիտելիքի դաստիարակչական ու ճանաչողական արժեքը
- մշակել մասնագիտական գրականությունը և ներկայացնել այն

Դասընթացն ուսումնասիրելու արդյունքում ուսանողը պետք է տիրապետի.
- վերակառուցել գրականության դասընթացը՝ ըստ ստացած գիտելիքի
- ձևակերպել նպատակ և ուրվագծել դրան հասնելու ուղիները,
- հասկանալ մշակույթի որպես մարդկային գոյության ձևի նշանակությունը
- օգտագործել աշխարհի գիտական պատկերի իմացությունը կրթական և մասնագիտական գործունեության մեջ,
- քննարկել և լուծել աշխարհայացքային, հասարակական և անձնային փիլիսոփայական խնդիրներ
- կիրառել հումանիտար, հասարակական և մշակութային գիտությունների ոլորտում ստա-ցած համակարգված տեսական գիտելիքները հասարակական և մաս¬նա¬գիտական խնդիրներ լուծելիս
- օգտագործել միջմշակութային հաղորդակցական հմտությունները
- տիրապետել հաղորդակցության ժամանակակից ձևերին
- իրականացնել խմբային աշխատանքներ՝ ըստ ուսումնասիրած նյութերի

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.

Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝
- վերլուծելու և սինթեզելու ունակություն(ԳԿ1);
- կազմակերպելու և պլանավորելու ունակություն(ԳԿ2);
- հենքային և ընհանուր գիտելիքներ(ԳԿ3);
- մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ(ԳԿ4):

Միջանձնային կոմպետենցիաներ (ՄՁԿ)՝
- թիմային աշխատանք( ՄՁԿ2);
- միջանձնային ունակություններ( ՄՁԿ3);
- բազմաձևության և բազմամշակութայնության ընդունում (ՄՁԿ4);
- միջազգային միջավայրում աշխատելու ունակություն (ՄՁԿ5);
- բարոյական արժեքներ (ՄՁԿ6):

Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝
- գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն (ՀԳԿ1) ;

- հետազոտություններ կատարելու ունակություններ (ՀԳԿ2);
- սովորելու ունակություն (ՀԳԿ3);
- նոր գաղափարներ առաջ քաշելու ունակություն(ՀԳԿ4);
- այլ երկրների մշակույթների և սովորությունների իմացություն(ՀԳԿ5);
- ինքնուրույն աշխատելու ունակություն(ՀԳԿ6);
- որակի կարևորության գիտակցում(ՀԳԿ7);
- հաջողության ձգտում(ՀԳԿ8):

<u>Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)՝</u>

- դրսևորել մասնագիտության պատմության և հիմունքների իմացություն (ԱԿ1);
- ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն(ԱԿ4);
- հասկանալ և օգտագործել քննադատական վերլուծության տեսությունների զարգացման մեթոդները (ԱԿ5);
- կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները (ԱԿ6);
- դրսևորեն ժամանակակից խոր գիտելիքներ մասնագիտական ոլորտում (նորագույն տեսությունների, դրանց մեկնաբանությունների, մեթոդների և եղանակների իմացություն) (ԱԿ9);
- քննադատորեն գնահատեն և մեկնաբանեն տեսության և պրակտիկայի նորագույն ձեռքբերումները (ԱԿ10);
- տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները (ԱԿ11);
- տիրապետեն տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին (ԱԿ14):

4. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների[3].

«ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել մասնագիտական գործունեության ընթացքում, նաև ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և մասնագիտական բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

5. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

| Չափանիշ | Առկա ուսուցման համակարգ | Հեռակա ուսուցման համակարգ |
|---|---|---|
| Դասընթացի ընդհանուր աշխատատարություն (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ) | 8 կրեդիտ/240 ժամ | |

| Աշխատանքի տեսակը | ժամաքանակ | ժամաքանակ |
|---|---|---|
| Դասախոսություն | 22 | 8 |

[3] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

| | | |
|---|---|---|
| Գործնական աշխատանք | 20 | 4 |
| Սեմինար պարապմունք | | |
| Լաբորատոր աշխատանք | | |
| Ինքնուրույն աշխատանք | | |
| Ընդամենը | | |
| Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն) | ստուգարք | ստուգարք |

6. Ուսումնական աշխատանքների տեսակները[4] .

- Գործնական աշխատանքների ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:
- Ինքնուրույն աշխատանքը ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:
  Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[5]՝
  - Ռեֆերատ – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
  - Գործարար խաղեր – պայմանական իրավիճակներում սոցիալ-տնտեսական համակարգերի և մարդկանց մասնագիտական գործունեության կառավարման գործընթացների նմանակեղծային մոդելավորում՝ առաջացող հիմնախնդիրների ուսումնասիրման և լուծման նպատակով:
  - Էսսե – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
  - Կլոր սեղան – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
  - Կոնկրետ իրավիճակների վերլուծություն – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
  - Նախագծերի մեթոդ – ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման

[4] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:
[5] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

կամ որոշակի արդյունքի ձևակերպման:

- Հարցի նախապատրաստման մոդել –կամավորության սկզբունքով ընտրված ուսանողն իր նախընտրած հակիրճ ձևով նախապատրաստում է տվյալ առարկայից քննության կամ ստուգարքի հարցերի իր պատասխանների փաթեթը: Քննությունից (ստուգարքից) 1 շաբաթ առաջ նա հանձնում է փաթեթը դասախոսին, որը ստուգում է այդ նյութերը և որոշում դրանց համապատասխանությունը տվյալ առարկայի բովանդակությանը:
- Ինքնուրույն աշխատանք համացանցում – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
- Աշխատանքային տետր – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:
- Զեկույց – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:
- Հարցազրույց – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հատուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

7. Դասավանդման մեթոդներն են՝[6] գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր

8. Ուսումնառության մեթոդներն են[7]՝ մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, ալգորիթմների և հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում

[6] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:
[7] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

9. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների[8].

| հ/հ | Թեմա (բաժին) | Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | դասախոսություն | սեմինար պարապմունք | գործնական աշխատանք | լաբորատոր աշխատանք | ինքնուրույն աշխատանք |
| 1 | Ներածական դասախոսություն: Նոր ժամանակաշրջանի գրականուէյան դրսևորումը | 2 | | | | |
| 2 | Եվրոպակնան էպոսներ | 2 | | | | |
| 3 | Ասպետական գրականություն | | | 2 | | |
| 4 | Վերածնունդը Իտալիայում: Դանտե, Ֆ. Պետրարկա, Ջ.Բոկաչիո | 2 | | | | |
| 5 | Վերածնունդը Ֆրանսիայում: Ֆ.Վիյոն, Ֆ.Ռաբլե: | | | 2 | | |
| 6 | Վերածնունդը Մեծ Բրիտանիայում: Ջ.Չոսեր, Եղիսաբեթյան պոետներ: | | | | | |
| 7 | Վ.Շեքսպիր և Մ.Սերվանտես: Ուշ Վերածնունդ: | 2 | | | | |
| 8 | Կլասիցիզմը որպես գրական ուղղություն | | | | | |
| 9 | Լուսավորչությունը Եվրոպական գրականությունում: Մեծ Բրիտանիա | | | | | |
| 10 | Լուսավորչությունը Ֆրանսիական գրականության մեջ: Վոլտեր, Դիդրո: | | | | | |
| 11 | Լուսավորչությունը Գերմանական գրականության մեջ: Գյոտե, Շիլլեր | | | | | |
| | Ընդամենը՝ | 8 | | 4 | | |

[8] Նման է օրացուցային պլանին

10. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

| հ/հ | Անվանումը/հեղինակ | Հրատարակության տարի |
|---|---|---|
| Պարտադիր գրականություն (ՊԳ) | | |
| 1. | Гилилов И. Игра об Уильяме Шекспире, или Тайна великого феникса. | 2004 |
| 2. | Зарубежная литература XX века (под. ред. В.М. Толмачева). | 2003 |
| 3. | Аникин Г.В., Михальская Н.П. История английской литературы | 1985 |
| | Բեովուլֆ<br>Ռոլանդի երգը<br>Պոեմ իմ Սիդի մասին<br>Նիբելունգների երգը<br>Աղվեսավեպը:<br>Վարդի վեպը:<br>Ժ.Բիդիե «Տրիստանը և Իզոլդան»<br>Դանթե «Աստվածային կատակերգություն»<br>Ջ.Չոսեր «Քենթերբերյան պատմվածքները»<br>Ջ.Բոկաչո «Դեկամերոն»<br>Լոպե դե Վեգա «Պարտիզպանի շունը»<br>Կալդերոն «Կյանքը երազ է»<br>Մ. Դը Մոնտեն «Փորձեր»<br>Սերվանտես «Դոն Քիխոտ»<br>Շեքսպիր «Սոնետների գիրքը», «Ռոմեո և Ջուլյետ», «Լիր արքա», «Օթելլո», «Համլետ», «Մակբեթ», «Ռիչարդ III»,<br>Կորնեյլ «Սիդ», «Հոռացիուս»<br>Ռասին «Ֆեդրա», «Անդրոմաքե»<br>Մոլիեր «Քաղկենին ազնվական», «Տարտյուֆ», «Դոն Ժուան»<br>Դեֆո «Ռոբինզոն Կռուզո» | |

| | | |
|---|---|---|
| | Սվիֆտ «Գուլիվերի ճանապարհորդությունները»<br>Ֆիլդինգ «Թոմ Ջոնսի արկածները»<br>Վոլտեր «Կանդիդ», «Զադիգ»<br>Դիդրո «Միանձնուհին»<br>Բոմարշե «Սևիլյան սափրիչը», «Ֆիգարոյի ամուսնությունը»<br>Շիլլեր «Ավազակները», «Մարիա Ստյուարտ»<br>Գյոթե «Ֆաուստ» | |
| Լրացուցիչ գրականություն(ԼԳ) | | |
| 1. | Леонова Н., Никитина Г., Английская литература 1890-1960гг. | 2004 |
| 2. | Бахтин М.М. Вопросы литературы и эстетики. М., 1975.<br>История всемирной литературы: в 9 т. / АН СССР; ИМЛИ им. А.М. Горького; М. 1989.<br>Луков В.А. История литературы. Зарубежная литература от истоков до наших дней. М., 2003. | |
| | Ինտերնետային աղբյուրներ | |
| 1. | www.readprint.com<br>Вераксич И.Ю.: Зарубежная литература. XX век Курс лекций http://20v-euro-lit.niv.ru/20v-euro-lit/veraksich-hh-vek-kurs-lekcij/lekciya-1.htm<br>http://20v-euro-lit.niv.ru/20v-euro-lit/veraksich-hh-vek-kurs-lekcij/lekciya-1.htm<br>https://licey.net/free/15-analiz_proizvedenii_zarubezhnyh_pisatelei_ biografii_inostrannyh_pisatelei/61-zarubezhnaya_literatura/stages/2068-osobennosti_literatury_ xx_veka<br>https://www.lang-lit.ru/2016/06/zarubezhnaya-literatura-xx-veka.html | |
| 2. | Keenan S. Renaissance Literature http://shodhganga.inflibnet.ac.in/bitstream/10603/96621/8/08_chapter2.pdf | |

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

| h/h | Թեմա | Ուսումնասիրվող հարցեր | Ժամաքանակ | Գրականություն[9] |
|---|---|---|---|---|

[9] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին կիսամյակ | | | | |
| 2. | Արտասահմանյան գրականություն 5-17 դդ | Եվրոպական էպոսներ<br><br>Միջնադար<br><br>Վերածնունդ<br><br>Կլասիցիզմ<br><br>Լուսավորչություն | 8 | ՊԳ 1-4; ԼԳ 1-2 |

12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | Թեմա | Ուսումնասիրվող հարցեր | Ժամաքանակ | Գրականություն[10] |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | Արտասահմանյան գրականություն 5-17 դդ | Եվրոպական էպոսներ<br><br>Միջնադար<br><br>Վերածնունդ<br><br>Կլասիցիզմ<br><br>Լուսավորչություն | 4 | ՊԳ 1-4; ԼԳ 1-2 |

12.3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

[10] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| h/h | Թեմա | Ուսումնասիրվող հարցեր | Ժամաքանակ | Ստուգման ձևը | Գրականություն[11] |
|---|---|---|---|---|---|
| 1. | --- | | | | |

12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

| h/h | Ինքնուրույն աշխատանքի թեմաները | Ուսումնասիրվող հարցեր | Աշխատանքի տեսակը[12] | Ներկայացման ժամկետները | Ստուգման ձևը | Գրականություն[13] |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| 1. | Արտասահմանյան գրականություն 5-17 դդ | Եվրոպական էպոսներ<br>Միջնադար<br>Վերածնունդ<br>Կլասիցիզմ<br>Լուսավորչություն | Ռեֆերատ,Էսսե,Նախագծերի իրականացում, Ինքնուրույն աշխատանք համացանցում, Զեկույց | | | ՊԳ 1-4; ԼԳ 1-2 |

13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում[14]

[11] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն
[12] Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը
[13] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն
[14] Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը

| Ռեսուրսի անվանումը | Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում) |
|---|---|
| Լսարան (հատուկ կահավորմամբ) | |
| Նյութեր լաբորատոր աշխատանքների համար | |
| Սարքեր, սարքավորումներ | Պրոյեկտոր, էլեկտրոնային գրատախտակ |
| Համակարգչային ծրագրեր | |
| Այլ | |

կազմակերպելու համար

14. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[15]:

Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասերին հաճախումների հաշվառման միջոցով՝առավելագույնը 20 միավոր,
- 4 գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 20 միավոր,
- 2 ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման 2 ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում.

---

[15]«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.062022թ.),

Դասընթացն ամփոփվում քննությամբ:

Ստուգարքով ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ ստուգումների և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:[16]

14.3. Գնահատման չափանիշները[17].

- Գործնական աշխատանքները՝ ռուսերեն լեզվով առավելագույնս անսխալ հաղորդակցվելու կարողություն, մասնագիտական տեքստեր կարդալու, ընկալելու, վերարտադրելու, թարգմանելու կարողություն, տրված բառապաշարի իմացություն, հանձնարարված աշխատանքների առկայություն:
- Ինքնուրույն աշխատանքը՝ ռեֆերատ, նախագծերի իրականացում, ինքնուրույն աշխատանք համացանցում, զեկույց՝ ըստ ներկայացված համապատասխան պահանջների:

[16] Կիրառվում է կամ առաջին, կամ երկրորդ պարբերությունն ըստ դասընթացի ամփոփման ձևի:

[17] Լրացվում է ըստ ամբիոնի /դասախոսի որոշման

| | | | | |
|---|---|---|---|---|
| Դասընթացի թվանիշը, անվանումը | ՕԼԳ/բ-110 Արտասահմանյան գրականության պատմություն- 2 /Ռլզ/ | | | |
| Դասընթացին հատկացվող կրեդիտը | 6 Կրեդիտ | | | |
| Ուսումնառության տարի/կիսամյակ | 2-րդ տարի, 1-ին կիսամյակ | | | |
| Ժամերի բաշխումը | Լսարանային | | Դասախոսություն | 8 |
| | | | Սեմինար | |
| | | | Լաբորատոր աշխատանք | |
| | | | Գործնական աշխատանք | 4 |
| | Ինքնուրույն | | | |
| | Ընդամենը | | | |
| Ստուգման ձևը | <u>Քննություն</u>, ընթացիկ քննություն, ստուգարք | | | |
| Դասընթացի նպատակը | «Արտասահմանյան գրականության պատմություն- 2» դասընթացի տվյալ բաժինը նախատեսված է բակալավրիատի «Օտար լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ տարվա 1-ին կիսամյակի համար: Դասընթացն իրագործվում է ինչպես դասախոսությունների (18 ժամ), այնպես էլ քննարկումների և գործնական աշխատանքների (14 ժամ) ձևով:<br>Դասընթացի նպատակն է՝<br>• ուսանողներին ներկայացնել Միջնադարի, Վերածննդի, Կլասիցիզմի և Լուսավորչության ժամանակաշրջանների գրականության զարգացման հիմնական փուլերի առանձնահատկությունները մշակույթի սինթետիկ պատմության համատեքստում,<br>• համեմատական ուսումնսիրության ասպեկտում ուսանողներին ծանոթացնել տարբեր երկրներում զարգացող ընդհանուր գրական ուղղությունների արտահայտության, տեսական հիմնական մոտեցումների, հասկացությունների և տերմինների հետ, որոնք անհրաժեշտ են գրական ավանդույթի համատեքստում ստեղծագործությունների լիարժեք վերլուծության համար,<br>• լայնացնել ուսանողների պատկերացումները արևմտյան մշակույթի ստեղծման և պատմական զարգացման մասին, տալ գրականության ասպարեզում մասնագիտական գիտելիքներ և, վերջապես, հարստացնել ապագա բանասերների բազմագիտությունը: | | | |

| | |
|---|---|
| Դասընթացի վերջնարդյունքները | Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք/ներ/ը.<br>Գիտելիք՝<br>• մասնագիտական գիտելիք և իմացություն<br>• արտասահմանյան գրականության մեջ ամենանշանավոր ստեղծագործությունների բովանդակությունը,<br>• գրականության մեջ և մշակույթում գեղարվեստական ոճերի, ուղղությունների և մեթոդների զարգացման պատմությունը:<br>Հմտություն՝<br>• հասկանալ և բացատրել տարբեր դարաշրջաններում և պատմական և սոցիալական համատեքստում գրված ստեղծագործությունների առանձնահատկությունները,<br>• արտահայտության անձնական միջոցները կապել տվյալ ժամանակաշրջանի համատեքստի հետ,<br>Կարողունակություն՝<br>• բացատրել տարբեր գրական երևույթները՝ համապատախանեցնելով դրանց առանձնահատկությունները դարաշրջանի կարևորագույն երևույթներին և միտումներին: |
| Դասընթացի բովանդակությունը | Թեմա 1 - Ֆեոդալական մշակույթի տիպը:<br>• Ֆեոդալական դարաշրջանի ոճի մոնումենտալիզմը, սպիրիտուալիզմը, ալլեգորիզմը: Եկեղեցու հայրերի ազդեցությունը: Գեղարվեստի կրոնական և կենցաղային բնույթը:<br>• Միջնադարյան էպիկական պոեմների պատմական և կրոնական աղբյուրները:<br>• Անգլոսաքսոնական, ֆրանսիական, իսպանական և գերմանական էպոսների պատմական, ազգային և գեղարվեստական առանձնահատկությունները:<br>• Կղերական գրականության ժանրերը / միստերիա և միրակլ/:<br><br>Թեմա 2 – XII-XIII դարերի ասպետական գրականություն<br>• Ասպետական վարքականոնը: Կուրտուազ արվեստի նրբաոճությունը, ազդեցությունը հետագա գրականության վրա: Արևելյան մշակույթի յուրացումը: Տարածության և ժամանակի յուրահատկությունը:<br>• Կուրտուազ վեպը և տրուբադուրների լիրիկայի հիմնական ժանրերը: «Տրիստանը և Իզոլդան»<br>• Քաղաքային գրականության ձևերը և ժանրերը: Աղվեսավեպը: Վարդի վեպը:<br><br>Թեմա 3 - Միջնադարից՝ նախավերածնունդ<br>• Բուրժուազիայի ուժեղացումը: Քաղաքների և |

| | |
|---|---|
| | համալսարանային մշակույթի զարգացումը: Նոր գեղագիտությունը: Հումանիստական գաղափարների տարածումը: Հին ձևի և նոր բովանդակության համադրումը:<br>• Նախավերածնունդը Իտալիայում: «Նոր քաղցր ոճ»:<br>• Դանթեի ստեղծագործության գեղարվեստական առանձնահատկությունները: «Աստվածային կատակերգության» կառուցվածքը, թվային սիմվոլիկան:<br>• Նախավերածնունդը Անգլիայում: Ջ.Չոսերի «Քենթերբերյան պատմվածքները»:<br>• Նախավերածնունդը Ֆրանսիայում: Վագանտների կամ գոլիարդների պոեզիան: Ֆ.Վիյոնի  բանաստեղծությունները:<br><br>Թեմա 4 - Վերածնունդը որպես գաղափարական շարժում<br>• Վերածնունդը որպես մարդկային մտքի վերելքի դարաշրջան: Անտիկ իդեալի կարևորությունը ռընեսանսային արվեստի և գիտության զարգացման համար:<br>• Իտալական արվեստը և  գիտությունը: Ռաֆաելի, Միկելանջելոյի, Լեոնարդո դա Վինչիի ստեղծագործությունները:<br>• Հումանիստական գաղափարախոսությունը: Ռընեսանսային անհատը:<br>• Ֆ.Պետրարկայի պոեզիան: «Canzoniere» ժողովածույի պոետիկան, ժանրային առանձնահատկությունները, սոնետի ավանդական ձևի ստեղծումը:<br>• Գրական «ցածր» ժանրերի զարգացումը: Նովելի ժանրի տարածումը: Ջ.Բոկաչոյի  «Դեկամերոնը»: Նովելների քրոնոտոպը, նոր, դեմոկրատական հերոսի իդեալի ստեղծումը:<br>• Էրազմուս Ռոթերդամցու «Հիմարության գովքը»:<br>• Հյուսիսային Վերածնունդը: Դիմանկարը որպես հիմնական գեղարվեստական ժանր: Բողոքականությունը և արվեստի ազատության սահմանափակումները:<br><br>Թեմա 5 – Վերածնունդը Ֆրանսիայում և Անգլիայում:<br>• Պլեյադի պոեզիան:  Նոր գրական լեզվի հաստատումը:<br>• Ռաբլեի «Գարգանտյուա և Պանտագրյուէլ» վեպի առանձնահատկությունները:<br>• Հիմնական թեմատիկան, կերպարների խորհրդանշական իմաստը: Ոճային առանձնահատկությունները:<br>• Անգլիայի գրականության զարգացման պայմանավորվածությունը պատմական իրադարձություններով: Անգլիական դրաման Շեքսպիրից առաջ:<br>• Քրիստոֆեր Մառլո: |

| | |
|---|---|
| | • Շեքսպիրի ստեղծագործության փուլերը: Տրագիկոմեդիան որպես շեքսպիրյան նորարարություն: Տիտանական կերպարները:<br>• Իսպանական թատրոնի «ոսկե դարը»: Լոպե դե Վեգայի դրամաների դասակարգումը: « Թիկնոցի և սրի» կատակերգությունը: Կալդերոնի կրոնական հայացքների արտացոլումը դրամաներում: Տիրսո դե Մոլինայի դրամաները: Նրա դերը Դոն Ժուանի «հավերժ կերպարի» ստեղծման մեջ:<br>• Սերվանտեսի «Դոն Կիխոտը» որպես Նոր ժամանակի առաջին վեպ:<br>• Գեղարվեստական աշխարհի խնդիրը Սերվանտեսի վեպում:<br>• Կրոնական պատերազմները: Ինկվիզիցիայի կողմից գիտության, արվեստի և գրականության ազատության ճնշումը: Արվեստի ակադեմիականությունը . Բերնինի/ և տոնավաճառային կատակերգությունը: Comedia dell’arte- ի դիմակները:<br>• Ուշ Վերածննդի սկեպտիցիզմը: Մ.Մոնտենի Փորձերը:<br><br>Թեմա 6 - Ռացիոնալիզմի դարը:<br>• Ռացիոնալիզմի ազդեցությունը XVII դարի գաղափարախոսության վրա: Կլասիցիզմի դարաշրջանի ճարտարապետության, կերպարվեստի և գրականության նորմատիվությունը: Երաժշտությունը. Պյորսել, Լյուլլի, օպերային արվեստի ձևավորումը:<br>• Ռիշելյոյի քաղաքականությունը: Ֆրանսիական թատրոնը: Կոռնեյլի և Ռասինի ողբերգությունը<br>• Մոլյիերի կատակերգության առանձնահատկությունները:<br><br>Թեմա 7 - Լուսավորչական գրականությունը:<br>• XVIII դարի գրական ուղղությունները:<br>• Լուսավորությունը որպես գաղափարական շարժում:<br>• Լուսավորությունը Անգլիայում: Դեֆո: Սվիֆտ: Ֆիլդինգ: Շերիդան:<br>• Լուսավորությունը Ֆրանսիայում: Հանրագիտարանի ստեղծումը: Վոլտեր: Դիդրո: Բոմարշեի կատակերգությունը:<br>• Լուսավորությունը Գերմանիայում: Լեսինգ:<br>• Վեյմարյան կլասիցիզմը: Շիլլեր: Գյոթե:<br>• Սենտիմենտալիզմ: «Գերեզմանային պոեզիա»: Սենտիմենտալ վեպ: |
| Գնահատման մեթոդները և չափանիշները | Ուսանողների գիտելիքների և հմտությունների հսկողությունն իրագործելու համար կիրառվում են՝<br>- գործնական աշխատանք |

| | |
|---|---|
| | - միջանկյալ քննություններ<br>- ուսանողների իքնուրույն աշխատանք<br>- արտալսարանային աշխատանք<br>- ավարտական ատենախոսության պաշտպանություն<br>- գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկա |
| Գրականություն | ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿՆ ՈՒ ՀՂՈՒՄՆԵՐԸ<br>Գեղարվեստական գրականություն<br>Բեովուլֆ<br>Ռոլանդի երգը<br>Պոեմ իմ Սիդի մասին<br>Նիբելունգների երգը<br>Աղվեսավեպը:<br>Վարդի վեպը:<br>Ժ.Բիդիե «Տրիստանը և Իզոլդան»<br>Դանթե «Աստվածային կատակերգություն»<br>Ջ.Չոսեր «Քենթերբերյան պատմվածքները»<br>Ջ.Բոկաչո «Դեկամերոն»<br>Լոպե դե Վեգա «Պարտիզպանի շունը»<br>Կալդերոն «Կյանքը երազ է»<br>Մ. Դը Մոնտեն «Փորձեր»<br>Սերվանտես «Դոն Քիխոտ»<br>Շեքսպիր «Սոնետների գիրքը», «Ռոմեո և Ջուլյետ», «Լիր արքա», «Օթելլո», «Համլետ», «Մակբեթ», «Ռիչարդ III»,<br>Կորնեյլ «Սիդ», «Հոռացիուս»<br>Ռասին «Ֆեդրա», «Անդրոմաքե»<br>Մոլիեր «Քաղկենին ազնվական», «Տարտյուֆ», «Դոն Ժուան»<br>Դեֆո «Ռոբինզոն Կռուզո»<br>Սվիֆտ «Գուլիվերի ճանապարհորդությունները»<br>Ֆիլդինգ «Թոմ Ջոնսի արկածները»<br>Վոլտեր «Կանդիդ», «Զադիգ»<br>Դիդրո «Միանձնուհին»<br>Բոմարշե «Սևիլյան սափրիչը», «Ֆիգարոյի ամուսնությունը»<br>Շիլլեր «Ավազակները», «Մարիա Ստյուարտ»<br>Գյոթե «Ֆաուստ»<br>Օժանդակ գրականություն<br>Бахтин М.М. Вопросы литературы и эстетики. М., 1975.<br>История всемирной литературы: в 9 т. / АН СССР; ИМЛИ им. А.М. Горького; М. 1989.<br>Н.М. Хачатрян. 5 лекций по истории средневековой литературы. http://svr-lit.ru/svr-lit/hachatryan-literatura-srednevekovya/index.htm<br>Алексеев М.П., Жирмунский В.М., Мокульский С.С., Смирнов А.А. История западноевропейской литературы. Средние века и Возрождение. |

| | |
|---|---|
| | М.: Академия, 2000.  461 с.<br>Луков В.А. История литературы. Зарубежная литература от истоков до наших дней. М., 2003. |